ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4542-Ա « 15 » սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի Հ.540-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ընդհանուր հարցերով տնօրեն Սերգեյ Կակոսյանի դիմումը՝ ՀՀ-ում ՄԱԿ-ի COP17 համաժողովի անցկացման շրջանակներում նախատեսվող ներդրումային ծրագրով 35/10կՎտ հզորության տրանսֆորմատորային ենթակայան կառուցելու նպատակով, Ոսկերիչների փողոց, N 1 հասցեին կից գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 900.0քմ մակերեսով հողամասն ընկերությանն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 27.02.2026թ. հ.ԴԳ-1779, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի 20.02.2026թ. հ.ՄՇ/4708, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 02.03.2026թ. հ.53/53.13/1334-2026, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի 02.03.2026թ. հ.490/26-1, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի /22.3/1080-2026 գրությունները, ՀՀ կադաստրի կոմիտեի հ.ԱՏ-16032026-01-0973 տեղեկանքը, որակավորում ունեցող չափագրողի կողմից կազմված տեղագրական հանույթը և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 01/11.2/3847-2026 գրությունը:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և ըստ ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 5-րդ գոտում (հողամասի ծածկագիր՝ 01-006-720-001, տող 24767 Երևան քաղաքի ավագանու 30.05.2013թ. հ.446-Ն որոշում):

Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի հ.540-Ա որոշմամբ՝ քննարկվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիայից փոխադրվել է էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին»

օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 7-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետով, 59-րդ հոդվածով և 66-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 17.02.2026թ. հ.Ն/9027-26, 26.03.2026թ. հ.Ն/18196-26 եզրակացությունները և 30.04.2026թ. հ.Ն/18196-26 գրությունը.

1. Սահմանել, որ համայնքային սեփականություն հանդիսացող, Ոսկերիչների փողոց, հ.1 հասցեին կից գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 900.0քմ , որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Ոսկերիչների փողոց, հ.1 հասցեին կից՝ 900.0քմ մակերեսով հողամասին տրամադրել «Ոսկերիչների փողոց, հ.1/2» հասցեն:

3. Ոսկերիչների փողոց, հ.1 հասցեին կից գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 900.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը, Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի հ.540-Ա որոշման համապատասխան, սահմանել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էներգետիկայի օբյեկտների:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային սեփականություն հանդիսացող 900.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքները ավարտելուց հետո, այն ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ որոշման ընդունման պահին գործող տարածագնահատման 5-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 53 017 200 (հիսուներեք միլիոն տասնյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ և փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

5. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝

1) ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ Երևան համայնքի անվամբ պետական գրանցման աշխատանքները.

2) Երևան համայնքի անվամբ իրավունքի պետական գրանցում կատարելուց և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարան առուվաճառքի պայմանագիր կնքելու վերաբերյալ դիմումի ու հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի վճարումը և տեղական վճարը հավաստող փաստաթղթեր ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Երևանի քաղաքապետի անունից կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3) որոշման հիման վրա տրամադրված անշարժ գույքի հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել ՀՀ կադաստրի կոմիտե և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի համապատասխան բաժնին, Կենտրոն

վարչական շրջանի ղեկավարին:

6. Ընդունել ի գիտություն, որ կառուցապատման հետագա գործառույթները անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

7. Սույն որոշումից բխող բոլոր գույքային իրավունքների պետական գրանցման, հողամասի հատակագծի հաստատման, պայմանագրի նոտարական վավերացման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանք ստանալու համար ծախսերը և այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջոցների հաշվին, առուվաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում՝ համաձայն կից ներկայացվող նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի):

8. Սույն որոշման ընդունման պահից հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը, հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում չվճարվելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

9. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

10. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

11. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ